1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՋԱՐԴԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կ. Զ. ԹԱՌՈՅԱՆ

XIX դ. 90-ական թվականները հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմության ամենաողբերգական և միաժամանակ ամենահերոսական էջերից են։ Այդ տարիներին Օսմանյան Թուրքիայում մշակվել և իրագործվում էր պետական մակարդակով կազմակերպված չարագործությունը՝ արևմտահայության ֆիզիկական բնաջնջումը։

Մինչ այդ ողջ կայսրության մեջ ցրված հայկական տարրը հաջողությամբ ծառայեցվում էր Թուրքիայի տնտեսական և կոլտուրական զարգացմանը, առևտրի ծավալմանը։ Հայ գործարար մարդկանց ծառայությունից չզրկվելու և հայկական հուզումների դեմն առնելու համար դեռ 1860-ական թվականների սկզբներից սուլթանը ստիպված էր դիմել որոշ զիջումների, հայերին իրավունք տալով ունենալու իրենց ազգային կյանքը տնօրինող կանոնադրությունը (այսպես կոչված Ազգային սահմանադրությունը) և հիմնարկները, որոնք քաղաքական ինքնավարության պատրանք էին ստեղծում։ Իսկ ինչ վերաբերում է հայերի տնտեսական հարստահարման ու ազգային ճնշման գոնե մեղմացմանը և Թուրքիայից անկախ կամ նրա կազմում տարածքային ինքնավարություն ունենալու նրանց ձգտմանը, ապա դա հանդիպում էր թուրքական իշխանությունների կատաղի դիմադրությանը՝ հանգեցնելով մասնակի ու զանգվածային կոտորածների, որոնց հետևանքով Արևմտյան Հայաստանը հայազրկվում էր և Հայկական հարցը թուրքական ձևով լուծվում։

1890-ական թվականների սկզբին սուլթանական կառավարությունը հայերի զանգվածային ջարդը հռչակում է որպես պետական քաղաքականություն։ Այն իրականացնելու համար ստեղծվում են քրդական զորամիավորումներ, այսպես կոչված համիդիե հեծյալ գնդեր. դրանց, կանոնավոր բանակի, ոստիկանության և թուրք ու քուրդ խուժանի միջոցով, ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Թուրքիայի հայաբնակ վայրերում կազմակերպվում են հայկական ջարդեր։

Պանիսլամիզմի և պանթուրքիզմի ոգուն համապատասխան, սուլթանը և Բարձրագույն դուռն ամենից առաջ հայերին զրկում էին երկրի օրենքների պաշտպանությունից։ Ոճիրների ու կեղեքումների դեմ հայերի դիմադրության ամենաթույլ փորձն անգամ դիտվում էր ոչ թե մարդկային տարրական իրավունքների, արժանապատվության պաշտպանություն, այլ մահմեդականության և սուլթանի հանդեպ անհավատարմության ու թշնամանքի դրսևորում։

1895 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում խաղաղ գույցի եկած հայերի դեմ սուլթանական կառավարությունը հանում է կանոնավոր բանակի զորամասերը, ոստիկանությանը, զինված մահմեդական հրոսակներին և նրանց միջոցով հաշվեհարդար տեսնում անմեղ մարդկանց հետ։ Մի քանի օրում զոհվում են հազարավոր անմեղ հայեր։

Հայերի այդ ջարդի առնչությամբ մեծ տերությունները սահմանափակվում են թուրքական կառավարության դեմ շատ թույլ բողոքներ հայտնելով։ Սուլթանը և նրա կառավարությունը համոզվում են, որ հայերի հետ կարող են վարվել իրենց ցանկացած ձևով՝ առանց մեծ տերությունների ճնշմանը ենթարկվելու։ Այնպես որ Թուրքիայի մայրաքաղաքում հայերի զանգվա-

ծային ջարդի առաջին, կարծեք հետախուզական քայլն ընդունվում է իբրև միակ և դյուրին միջոց՝ նրանց բնաջնջելու համար։

1895 թ. պետական խորհրդի նիստերից մեկում սուլթան Աբդուլ Համիդը պահանջում է սկսել հայերի զանգվածային կոտորածը։ Երբ պալատականներից մեկը խոսք է բացում այդ հարցում եվրոպական պետությունների ու մամուլի վերաբերմունքի մասին, սուլթանը նկատում է. «Եվրոպան... ամբողջ 19-րդ դարում ատամները թափած պառավի նման մշտապես փընթփընթում է ու ետ քաշվում։ Իսկ ինչ վերաբերում է եվրոպական մամուլին, ապա այդ մասին պետք չէ հոգալ, ամի բուռ ոսկով կարելի է ամենամեծ ժուռնալիստի բերանը փակել»[1]։ Այնուհետև, սուլթանը Շաքիր փաշայի ղեկավարությամբ կազմում է հատուկ հանձնաժողով և գործուղում հայկական վիլայեթներ, իբր խոստացած բարենորոգումներն իրականացնելու համար։ Նման հանձնաժողովներ էին կազմվել նաև տեղերում՝ Էրզրումում, Վանում, Բիթլիսում և այլուր։ Իրականում բարենորոգումների հարցը մնայն ցուցանակ էր այդ հանձնաժողովների համար։ Նրանց հիմնական դերն ու խնդիրն էր տեղական պայմաններին համապատասխան նախապատրաստել ու իրականացնել հայկական ջարդերը։

Վիլայեթներում բարենորոգումների անցկացումը նախապատրաստելու, բայց իրականում հայկական ջարդեր կազմակերպելու համար Շաքիր փաշան ուղևորվում է նախ Տրապիզոն, ապա Բաբերդ, Կարին, Բայազետ, ամենուրեք հանդիպելով հայերի սառն ընդունելությանը։ Փաշան Բայազետից վերադառնում է Կարին, հրաժարվելով Վան, Մուշ, Բիթլիս այցելելուց[2]։

Հայերի առաջին զանգվածային ջարդը կազմակերպվում է Տրապիզոնում, ուր 1895 թ. սեպտեմբերի 20-ին մահափորձ էր կատարվել պաշտոնից հեռացված Վանի վիլայեթի վալիի՝ հայատյաց Պարտի փաշայի դեմ[3], որը վերադառնում էր Կ. Պոլիս։ Այս անհաջող մահափորձը ջարդերի առիթ է դառնում։ Սեպտեմբերի 26-ին առավոտյան ժամը 10-ին[4], մոսուլմանական զինված հրոսակախմբերը ոստիկանության հետ միասին, հարձակվում են Տրապիզոնի անզեն հայերի վրա և սկսում կոտորածը։ Ջարդը սոսկալի էր քաղաքի հրապարակում, ուր սբախոտվող են արվում մոտ 70 անմեղ հայեր[5]։ Թուրք հրոսակները սպանությունները կատարում էին ամենադաժան ձևերով, որոնք վեր էին ամեն մի պատկերացումից։ Դանիացի նշանավոր գրականագետ Գ. Բրանդեսը «Հայաստանը և Եվրոպան» գրքում օրինակ է բերում, թե ինչպես Տրապիզոնում կոտորածի առաջին օրը մի հայի, որ խանութից հաց էր տանում տուն, թուրքերը բռնում են, սկզբում կտրում են մի ձեռքը, ապա՝ մյուսը և ստիպում, որ խաչ հանի։ Դրանից հետո կտրում են ականջը, ապա լեզուն, դաշույնի ծայրով հանում են աչքերը, հետո կտրատում ոտքերը[6]։

Ջարդերի ընթացքում ավերում ու կողոպտում են հայերի տներն ու խանութները։ Նույն բախտին են արժանանում նաև Տրապիզոնի շրջակա հայաբնակ գյուղերը և դրանց բնակչությունը։ Ջարդերից ազատվածները մատնվում են ծանր ու թշվառ վիճակի։

1895 թ. սեպտեմբերի վերջերին սուլթան Համիդն իր անձնական քարտուղար Սյուրեյյա փաշային հանձնարարում է ջարդերի վերաբերյալ հրահանգ ուղարկել Երզնկա՝ չորրորդ զորաբանակի հրամանատարին։ Սյուրեյյա փաշան այդ մասին մաերմարար հայտնում է պալատի գլխավոր բժիշկ Տիգ-

---

1 Երկրի ձայնը, 1907, հ. 7—19, էջ 11։

2 Կարնո հիլատակին։ Կոտորածից առաջ։ Կարնո կոտորածը, Վիեննա, 1896, էջ 9։

3 Архив внешней политики России (далее АВПР), ф. Политархив, д. 3433, л. 2—4.

4 Նույն տեղում, ф. «Канцелярия», д. 470, ч. 26. հ. II, р. 629:

5 Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 56, գ. 208, թ. 2, ց. 5, գ. 55, թ. 12։

6 Գ. Բրանդես, Հայաստանը և Եվրոպան, Ժնև, 1907, էջ 5։

րան Փեշտիմալճյանին, որը, իր հերթին, տեղեկացնում է Կ. Պոլսի եվրոպական պետությունների դեսպաններին։ Այդ անգաղտնապահության համար Սյուրեյյա փաշան դաժանորեն պատժվում է՝ նախ ապտակ է ստանում սուլթանից, հետո էլ իր տանը «հանկարծամահ» լինում։ Մի քանի օր հետո գտնըվում է նաև Տ. Փեշտիմալճյանի դիակը։ Նրան թունավորել էին[7]։

Սուլթանի գաղտնի կարգադրության հիման վրա, հոկտեմբերի 9-ին, թուրք զինվորները և քուրդ համիդիեները հարձակվում են Երզնկայի շրջակայքում գտնվող անզեն հայերի վրա ու կոտորում նրանց[8]։ Հարկ է նշել, որ կոտորածից երկու շաբաթ առաջ հայերը լսել էին, որ կենտրոնական իշխանության թողտվությամբ թուրք հրոսակները և քուրդ համիդիեները պատրաստվում են հարձակվելու իրենց վրա։ Այդ մասին նրանք տեղյակ էին պահել զորքի հրամանատարին և պաշտպանություն խնդրել։ Հրամանատարը խոստացել էր կանխել, բայց կոտորածի ժամանակ զինվորները ոչ միայն չէին ցանկանում դադարեցնել արյունահեղությունը, այլ իրենք էին ոչնչացնում այն հայերին, որոնք ինքնապաշտպանության փորձ էին անում։ Մոտ 1500 զինված հրոսակներ ավերում ու թալանում են հայերի խանութները, կրպակները, արհեստանոցները, սրախողխող անում մարդկանց[9]։ Կոտորածը տևում է 6 ժամ։ Սպանվում են ավելի քան 100, վիրավորվում մոտ 500 մարդ[10]։ Ավերվում են ու կրակի մատնվում Երզնկայի կազայի համարյա բոլոր հայաբնակ գյուղերը[11]։ Քաղաքից մոտ 3 կմ հեռավորության վրա գտնըվող Բզըվան գյուղի հայերը ջարդից փրկվելու նպատակով ապաստանում են եկեղեցում, սակայն թուրքերը մտնում են այնտեղ և բոլորին կոտորում։ Թալանվում ու հրդեհվում է 120 տնտեսություն ունեցող Մթնի գյուղը, ողջակիզվում 20-ից ավելի կին ու տղամարդ[12]։ Տակնուվրա են արվում Մեղացիկ, Ագարակ, Բթառիճ, Շխլի, Էրկան, Տաճարակ, Խնձորիկ, Գարաթալու, Կխլինե, Ղարաքիլիսե գյուղերը։ Վերին և Ներքին Ձիթթլիկ, Փալանկա, Կյոլնցիկ և այլ գյուղերի բնակիչներն ապաստանում են լեռներում։ Հոկտեմբերի 25-ին Գարաչայ կազայի Արմուտան-Քեփի և Արմուտան-Սաչիր գյուղերի վրա հարձակվում են այլ վայրերից այստեղ եկած հազարից ավելի զինված հրոսակներ։ Հոկտեմբերի 14-ին թուրք խուժանը, կանոնավոր բանակի զորաջոկատներն ու ոստիկանությունն ավերում են Բաբերդը և բնաջնջում բնակիչներին։ Լինում է նաև հերոսական դիմադրություն։ Բաբերդի կազայի Միզուցիկ գյուղի երիտասարդությունը զինվում և կազմակերպում է գյուղի պաշտպանությունը։ Թշնամին երեք անգամ հետ է մղվում, բայց համալրում է ստանում։ Անհավասար կռվում հայերը պարտվում են, իսկ գյուղն ավերվում ու թալանվում է[13]։

1895 թ. սեպտեմբերի 27-ին Իզմիթի սանջակի Կեյվեի կազայի Աքհիսար նահիեի կենտրոնի շրջակայքում հավաքված մեծ թվով անզեն հայերի վրա հանկարծակի հարձակվում են զինված թուրք հրոսակները և քուրդ համիդիեները, սպանում 33 մարդ, կողոպտում նրանց դրամն ու ապրանքը։ Հոկտեմբերի 8-ին և 20-ին կանոնավոր բանակի զինվորներն ու համիդիեներն ասպատակում են Կյարլե գյուղը[14]։

---

7 Լ. Զորմիսյան, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, Բեյրութ, 1947, էջ 438։

8 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 208, թ. 2, նաև ց. 5, գ. 152, թ. 4, 5։

9 Նույն տեղում։

10 ՀՀ Մշակույթի նախարարության Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետև՝ ԳԱԹ), ֆ. Առաքելյան Հ. (14), հ. 165—169, թ. 3—5։

11 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 5, գ. 72, թ. 26—27։

12 Նույն տեղում, գ. 55, թ. 114—115, նաև գ. 72, թ. 26—27, ԳԱԹ, ֆ. Առաքելյան Հ. (14), հ. 165—169, թ. 3—5, 9, 13։

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում, ց. 5, գ. 55, թ. 115։

Կարինում հայերի ջարդը կազմակերպում է անձամբ Շաքիր փաշան։ Հոկտեմբերի 18-ին, երբ հայերը սովորականի պես զբաղված էին իրենց առօրյա խաղաղ աշխատանքով, միջնաբերդից տրվում է կոտորածի ազդանշանը՝ հնչում են զինվորական փողերը։ Մզկիթներից դուրս են թափվում մոլեռանդ հրոսակները և կացիններով ու դաշույններով զինված հարձակվում անզեն հայերի վրա ու կոտորում նրանց[15]։ Հրոսակներին օգնում էին զինվորները, որոնք նպատակավոր դիրքեր բռնած գնդակոծում էին հայերին։ Մոտ 300 զինվորներ ու 2000 հրոսակներ ավելի քան տաս ժամ կոտորում էին անզեն հայերին, կողոպտում նրանց ունեցվածքը, հրդեհում բնակարանները։ Զոհերի թիվը հասել էր 570-ի[16]։ Քաղաքում հայերի կոտորածը կրկնվում է նոյեմբերի 13-ին։ Այրվում, թալանվում են 710 պահեստ ու խանութ, 400 տուն։ Քաղաքում հայերի նյութական կորուստը, ինչպես նշվում է աղբյուրներում, կազմում էր ավելի քան կես միլիոն օսմանյան լիրա[17]։ Էրզրումի վիլայեթի Բասենի կազայի 15 հայաբնակ գյուղերում ավերվում է 785 տուն, կոտորվում 129 մարդ և այլն[18]։

1895 թ. հոկտեմբերի 18-ի Կարինի կոտորածի ժամանակ թուրք ջարդարարների դեմ հերոսաբար էին մարտնչում մասնագիտությամբ զինագործներ՝ Հովհաննես Կորկոտյանը և Ավետիք (Տեր-Գաբրիելին) Վեմյանը (Ղայայան), որոնք ընկնում են անհավասար մարտում[19]։

Այդ ամիսներին լարված ու ծանր վիճակի մեջ էր Մուշ քաղաքի և նրա մերձակա շրջանների հայ բնակչությունը։ Անընդհատ տեղի էին ունենում ընդհարումներ ու հայերի ունեցվածքի կողոպուտ։ Հոկտեմբերի 26-ին Ճեպանցի քուրդ աշիրեթի աղաներից Այու բեկի հրոսակները 34 հեծյալ և հետևակ զինվորների հետ հարձակվում են Մուշի դաշտի Ջիարեթ գյուղի վրա, հափշտակում են 1035 գլուխ մանր, 221 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, սպանում բազմաթիվ անմեղ մարդկանց[20]։ Նույն ամսի 27-ին 100 քուրդ համիդիեներ հարձակվում են Խեյրան գյուղի վրա և թալանում հայերի ունեցվածքը։ Հոկտեմբերի 29-ի գիշերը մոտ 50 համիդիեներ հարձակվում են Շեխլան գյուղի վրա, սակայն հարևան Մեյդան քրդական գյուղի բնակիչների օգնությամբ հասնելով հետ են մղում հրոսակներին[21]։ Ավերվում ու թալանվում են Սասունի Խիանք և Խուլփ գավառների Ընձքար, Մոզրձոր, Ահարոնք, Շուշեք, Կուսգետ, Հորանք, Փառքա, Սաղտուն, Հեղին, Ընկուզնակ, Արտկունք, Իշխանձոր, Բերմ և այլ գյուղեր[22]։

Չնայած նյութական մեծ կորուստներին, Սասունում, այնուամենայնիվ, ջարդեր քիչ եղան։ Պատճառը, ըստ էության, մեծ տերությունների ուշադրությունից խուսափելու ձգտումն էր և, գլխավորապես, այն, որ այդ հարցում քրդերը հիմնականում հրաժարվում էին գործակցել թուրքական իշխանությունների հետ, որովհետև 1894 թ. կռիվներից հետո նրանք հուսախաբ էին եղել իրենց ակնկալությունների մեջ։

Ավելի ծանր կացության մեջ էին Բիթլիսի վիլայեթի Սղերդի սանջակի հայաբնակ գյուղերը, որոնք ավերվում են թուրք զինվորների ու քուրդ հրոսակների ձեռքով։ Սանջակի ամեն մի հայաբնակ գյուղում զոհերի թիվը, միջին հաշվով, հասնում էր 100 մարդու։ Թալանվում է հայերի ունեցվածքը։ Ավարի բաժանման ժամանակ հրոսակների միջև արյունալի կռիվներ էին ծագում։ Այդ բանից խուսափելու համար ավարի բաժանումը հրոսակները

---

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում, թ. 112—113, գ. 77, թ. 1—5։

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, թ. 113—114, գ. 77, թ. 1—5։

19 Կարնո հիշատակին..., էջ 59—60։

20 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 5, գ. 70, թ. 5—6։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում, թ. 5—8։

սկսում են կատարել վիճակահանության միջոցով[23]։ Սանջակում ջարդերն ընդմիջումներով շարունակվում են մինչև 1897 թ. սկզբները։ Վիլայեթում ավերվում է 102 հայաբնակ գյուղ[24]։ Սարսափելի վիճակի է մատնվում վիլայեթի կենտրոն Բիթլիս քաղաքը։ 1895 թ. հոկտեմբերի 14-ին քաղաքում սկսվում է կոտորածը՝ զոհերի թիվը 1000-ից անցնում էր։ Բիթլիս վաճառաշահ քաղաքը վերածվում է կատարյալ ավերակների։ Ավազակաբարո շեյխ Սաիդ Ալիի հրոսակների ու թուրք զինվորների ձեռքով ավարի ու ավերման են ենթարկվում շրջակա Դաղիկ, Խրզան, Շինիձոր, Վարզան գյուղերը, կոտորվում հարյուրավոր բնակիչներ[25]։

Թուրք ու քուրդ ջարդարարների դեմ լավ էին նախապատրաստվել Խնուսի և Բուլանըխի շրջանների հայերը։ Այստեղ կազմակերպվել էին ինքնապաշտպանական հարձակային խմբեր, որոնց հայտնի ղեկավարներից էր հավասարակշռված ու աննկուն Արմենակ Ղազարյանը (Հրայր)։

1890-ական թվականներին գործող ինքնապաշտպանական հարձակային խմբերից առանձնապես աչքի էր ընկնում Ախլաթի շրջանի Սոխորդ գյուղի բնակիչ Սերոբ Վարդանյանի (Աղբյուր Սերոբ) խումբը։ 1895 թ. աշնանը Ախլաթի շրջանում խումբը պաշտպանում էր ավելի քան 35 հայաբնակ գյուղ։ Այդ պաշտպանության հետևանքով վերջիններս միայն նյութական կորուստներ են ունենում։ Սերոբի խմբի 27 մարտիկները ցրված էին հայաբնակ գյուղերում և կազմակերպում էին գյուղացիների ինքնապաշտպանությունը, հաջողությամբ հետ մղում հրոսակների ու ոստիկանության գրոհները։ Սերոբը բոլորի համար գառնում է սիրված հերոս։

Թուրքական կառավարությունը Սերոբի հարձակային խմբի դեմ մեծ ուժ է հանում։ 1897 թ. այդ ուժերը պաշարում են Սոխորդ գյուղը, ուր գտնվում էր Սերոբը։ Վերջինիս հաջողվում է դուրս գալ պաշարումից և ապաստանել լեռներում։

1897 թ. վերջերին Սերոբն իր խմբով անցնում է Սասուն, որտեղ կուտակվել էին մեծ թվով հարձակային զինված խմբեր, և ստանձնում նրանց բոլորի ղեկավարությունը։

1899 թ. վերջերին, երբ համառ ու արյունալից կռիվներից հետո Սերոբն իր խմբով գտնվում էր Գելիեգոզան գյուղում, Բիթլիսի վալին այնտեղ է ուղարկում Ալայ բեյի հրամանատարությամբ գործող կանոնավոր բանակի մի մեծ ջոկատ, որը քուրդ ցեղապետ Խալիլի գլխավորած 2000 զինված բանդիտների հետ գիշերով պաշարում է գյուղը և կյանքը բացվելուն պես հարձակման անցնում։ Սերոբը իր ընկերների ու մերձավորների հետ ծանր մարտեր մղելով, բարձրանում է Անգակ լեռը։ Թուրք-քրդական ուժերը շրջապատում են Սերոբի խմբին։ Անհավասար կռվում հերոսաբար ընկնում են Սերոբը, նրա եղբայրներ Մխոն ու Զաքարը, փոքրահասակ որդին՝ Հակոբը և մյուս ընկերները։ Սերոբի կինը՝ Սոսեն, վիրավոր վիճակում գերի է վերցվում[26]։

Սերոբի մահից հետո հարձակային զինված խմբերն Անդրանիկ Օղանյանի ղեկավարությամբ շարունակում են ծանր մարտեր մղել՝ արևմտահայերի կյանքը և գույքը պաշտպանելու համար։

Խ. ուսի և Բուլանըխի գավառներում հարձակային խմբերի ակտիվ գործողությունների հետևանքով ջարդեր համարյա չեղան։

1890-ական թվականների ջարդերի ժամանակ ծանր կորուստներ ունեցան Վանի վիլայեթի հայերը։ Ալջավազ, Արճեշ, Գևալ և այլ կազաների ու Վանի շրջակայքի գյուղերի բնակիչներն անհավասար ու ծանր մարտերով հետո մասամբ կոտորվում են, թալանվում է նրանց ունեցվածքը։ Ինչ վերա-

---

23 Նույն տեղում, գ. 72, թ. 8—10։

24 Геноцид армян в Османской империи. Ереван, 1966, с. 97.

25 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 72, թ. 9—10։

26 Մարտ, 1900, № 21։

բերում է Վան քաղաքին, ապա 1896 թ. հունիսի ինքնապաշտպանությունը հերոսական ու անզիջում պայքարի մի պայծառ օրինակ է հայ ժողովրդի ազատագրական պայքարի բազմադարյան պատմության մեջ։

Ինքնապաշտպանության ճնշումից հետո 1896 թ. հունիսի 10—11-ին թուրքական զորքերն ավարի ու ավերման են ենթարկում քաղաքի հարկական թաղերը։ Այրվում ու ավերակների է վերածվում ավելի քան 3000 տուն, զոհվում 1000-ից ավելի հայ[27]։

Վանի վիլայեթում (քաղաքը չհաշված) կոտորվում է 20000-ից ավելի հայ։ Կոտորածը մեծ չափերի էր հասել Արճեշում, ուր Հաջի Թիմուր և Էմին ցեղապետերը ցորենի հորերի մեջ ողջ-ողջ թաղում էին զինաթափված, պաշտպանության միջոցներից զրկված հարյուրավոր հայերի։ Քյոռ Հյուսեին փաշան առերես ցույց տալով, թե պաշտպանում է հայերին, զափթում էր նրանց հողերն ու ունեցվածքը։ Նույն փաշան հեռավոր վայրերում ակտիվորեն մասնակցում էր հայերի ջարդին։ Այս բոլորին ավելանում են սովն ու համաճարակը։ 1896 թ. օգոստոսի 14—17-ը մեծ կոտորած է տեղի ունենում նաև Կ. Պոլսում, որտեղ կոտորվում է մոտ 10.000 հայ, երկրի ներքին գավառներ է աքսորվում 16.000-ից ավելի մարդ, որոնց մեծ մասը ոչնչացվում է։

Զանգվածային ջարդերը մեծ չափերի են հասնում Սվազի վիլայեթի հայաբնակ գյուղերում ու քաղաքներում։ Թուրքական հրոսակները, կանոնավոր բանակի զինվորների ու ոստիկանության հետ համագործակցած 1895 թ. հոկտեմբերի 31-ին շուկայում սրախողխող են անում հարյուրավոր հայերի, թալանում նրանց խանութները, կրպակները և արհեստանոցները։ Նոյեմբերի 2-ին հրոսակախմբերը հարձակվում են քաղաքի հայաբնակ թաղերի վրա և ամեն ինչ ավերելով սրի են քաշում բնակչությանը։ Տակնուվրա են արվում վիլայեթի Սուշեհիր, Տիվրիկ, Թամզարա, Զմարա, Քերզեյուրտ, Քյուտակ, Քեմե ավանները և դրանց հարակից 50—60 հայաբնակ գյուղեր[28]։

Հերոսական էր Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը, որի ընթացքում անօրինակ սխրագործություններ է կատարում Դանիել Չավուշի հայդուկային խումբը։ Արյունալի կռիվներ են մղվում Բյուրք գյոզի պաշտպանության ժամանակ։ Չորսօրյա կռվից հետո, երբ կռվող ուժերը զգալիորեն նվազել էին, զինամթերքը սպառվել, խումբը քաշվում է լեռները, ապա անցնում է Փոքրագ դերեսի կոչվող հունաբնակ շրջանը։ Բայց թուրքական զորքը կրնկակոխ հետապնդում էր նրան։ 1895 թ. նոյեմբերի վերջերին հայ հայդուկները պաշարվում են Արպայիր կոչված վայրում։ Տեղի է ունենում անհավասար ու արյունալի մարտ։ Մարտում ընկնում են շատ քաջարի հայդուկներ, նրանց թվում նաև Դանիել Չավուշը։

Պայքարը շարունակում է Ղուկաս Աղբարը։ Բայց 1896 թ. նրան իր տանը ձերբակալում են և նետում Շապին-Գարահիսարի բանտը, հետո տեղափոխում Սվազ, որտեղ դատապարտում են ցմահ բանտարկության։ Ղուկաս Աղբարը Սվազի բանտում մնում է մինչև 1908 թ.։

Ջարդից չի խուսափում Դիարբեքիրը։ 1895 թ. նոյեմբերի 1-ին քաղաքի մոլլաներից մեկը՝ Աբբասը, մզկիթում իր քարոզը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Քանի որ կյավուրները թոթափել կուզեն իրենց լուծը... մեր ղուրանի օրենքով և կարաեր հրամանով ամեն իսլամ պետք է 25 անհավատ ջարդե և տիրանա անոնց ինչքերուն և կիներուն»[29]։ Նույն օրը թուրք ու քուրդ հրոսակները ոստիկանների հետ քաղաքի շուկայում թալանում ու քարուքանդ են անում հայերին պատկանող խանութները և արհեստանոցները։ Այնուհետև նրանք գրոհում են քաղաքի հայաբնակ թաղերի վրա և անխնա կոտորում բնակիչներին։ Միայն մի տան մեջ կոտորվում է 80 մարդ։ Հայա-

27 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 5, գ. 184, թ. 48։

28 Նույն տեղում, թ. 19, նաև գ. 72, թ. 1—2։

29 Արմենիա, 12. I. 1896։

բնակ թաղերի վրա հարձակումը կրկնվում է մի քանի օր հետո։ Այս անգամ հրդեհվում են հայերի բնակարանները, թալանվում նրանց վերջին ունեցվածքը։ Այնուհետև, հրոսակներն ու ոստիկանները շարժվում են հայաբնակ գյուղերի վրա։ Քուրդ ջարգարար Ալոյե Քաչալը մոտ 500 հրոսակով հարձակվում է հայաբնակ Դըթբրպըլ գյուղի վրա և տակնուվրա անում այն[30]։ Միայն Տիգրանակերտի դաշտում ավերվում է 119 հայաբնակ գյուղ[31]։ Գյուղերում ջարդն ու թալանը շարունակվում են 20 օր։ Ջարդից հետո իշխանությունները հայերից բռնությամբ խլում են զենքերը, կատարում ձերբակալություններ։ Ոչ լրիվ տվյալներով քաղաքում կոտորվում է 2000 և վիրավորվում 15000 հայ, թալանվում ու հրդեհվում են բնակարաններ, խանութներ, կըրպակներ, արհեստանոցներ. հայերը կորցնում են իրենց ունեցվածքի 95 %-ը, մոտ 10 միլիոն թուրքական ոսկի, այրվում ու ավերակների են վերածվում համարյա բոլոր եկեղեցիները և վանքերը։ Դիարբեքիրի վիլայեթում նահատակված հայերի թիվը հասնում էր 25000-ի[32]։

Խարբերդի վիլայեթում ջարդերը տևվում են գյուղերից։ Հյուսեինիկ գյուղի ջարդը սկսվում է հոկտեմբերի 31-ին։ Պաշտպանության միջոցներից զրկված զգալի թվով հայեր ջարդից խուսափելու համար հեռանում են լեռները, շատերն էլ մահմեդական դառնալու ցանկություն հայտնելով՝ ապաստանում են մզկիթում և իրենց հարևան թուրքերի բնակարաններում։ Հոկտեմբերի 31-ին գյուղում զոհերի թիվը հասնում էր 120-ի։ Թուլլու (Թլկատին) գյուղում ջարդ կազմակերպելու համար բերվել էին մեծ թվով զինվորներ և ավելի քան 1500 զինված հրոսակներ։ Հայերը տեղյակ էին այդ ուժերի կուտակման մասին։ Վտանգը կանխելու համար նրանք դիմում են ինքնապաշտպանության, բայց զենք ձեռք բերել չեն կարողանում։ Թուրք և քուրդ խուժանը զինվորների հետ անցնում է հարձակման, թալանում ու կրակի մատնում հայ գյուղացիների տները և ունեցվածքը։ Մարդկային զոհեր և նյութական զգալի կորուստներ են ունենում Բազմաշեն, Քեսիրիկ, Խուպագյուղ և ուրիշ շատ գյուղեր։ Այդ ավարառությունների ու ջարդերի մասին Խարբերդի հայոց առաջնորդ Պետրոս վարդապետ Բագրատունին 1895 թ. նոյեմբերի 9-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքին գրում է. «Վիճակիս Ուլ-Օվայի և Գաղ-Օվայի ընդարձակ դաշտերու վրա շինված 53 հայ գյուղերը հիմնովին ավերվեցին, բնակչության ամբողջ ստացվածքը կողոպտվեց, եկեղեցիները քանդվեցին, շատ մարդիկ նահատակվեցին, կենդանի մնացածների զգալի մասը մահմեդականություն ընդունեց, հազարավորները մերկ ու սոված թափառական դարձան։ Արշավանքը հասավ մինչև Խարբերդ, պաշարվեց ս. Հակոբ թաղը, ուր միայն հայեր էին բնակվում։ Այդ թաղն վտանգ բնաջնջվեց։ Այս և մյուս թաղերում հայերի տներն ու ունեցվածքը ավարի ենթարկվեցին ու այրվեցին»[33]։

Նյութական և մարդկային մեծ կորուստներ են ունենում Ակնի հայերը։ 1896 թ. սեպտեմբերի 3-ին տևվում է Ակնի կոտորածը։ Թուրքերը հարձակվում են քաղաքի «Վերին» կոչված թաղի վրա և հրդեհում հայերի տները։ Սկսվում է ընդհանուր խուճապ. շատերն այրվում են բոցերի մեջ, իսկ դրանից դուրս եկած ազատվածներին զինվորները գնդակահարում են։ Նույնը կատարվում է նաև Լիճք, Բինկյան, Կամա, Կամարակապ և այլ գյուղերում։ Զոհերի թիվը 3000-ից անցնում էր։

Հայերի ջարդը մեծ ծավալ է ընդունում Արաբկիրում։ Նահանգապետ այստեղ բերված քուրդ հրոսակների ու կանոնավոր բանակի զինվորների հետ, մոլլանների գրգռիչ կոչերով ոգի եկած մահմեդական մոլեռանդ ամբոխը հարձակվում է հայերի վրա։ Վերջիններս դիմում են ինքնապաշտպանության,

30 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 5, գ. 85, թ. 131—132։

31 Геноцид армян в Османской империи, с. 94.

32 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 5, գ. 85, թ. 131—132։

33 Նույն տեղում։

Արյունալի կռիվները տևում են 10 օր։ Քաղաքի հայաբնակ թաղերը վերածվում են ավերակների. կողոպտվում է հայերի ունեցվածքը, կոտորվում ավելի քան 2800 հայ։ Կոտորածից հետո սկսվում են ձերբակալությունները։ Ձերբակալվում և Խարբերդի բանտն են նետվում 105 հայեր։ 1895 թ. նոյեմբերի 28-ին քուրդ և թուրք հրոսակները հարձակվում են Զիլեի հայաբնակ թաղերի վրա, թալանում են հայերին պատկանող խանութները, կրպակները, արհեստանոցները, հրդեհում բնակելի տներն ու առևտրական շինությունները, կոտորում 184 հայ։ 1896 թ. ջարդեր են կազմակերպվում Նիկսարում։ Քաղաքի հայերը, ենթարկվելով հրոսակների անակնկալ հարձակմանը, կորցնում են իրենց ունեցվածքը, տալիս են ավերի քան 150 մարդկային զոհ։ Նույն ժամանակամիջոցում նման հարձակում է կատարվում նաև Գաբու Ազիզը գյուղի վրա, որի հայ բնակչության մի մասը ոչնչացվում է, իսկ մյուսներն ապաստանում են լեռներում կամ իրենց կյանքը փրկում մահմեդականություն ընդունելով[34]։

1897 թ. մարտին, ջարդի նոր ալիք է բարձրանում Թոքատում. կոտորվում են բազմաթիվ հայեր, որոնց թվում նաև հոգևորականներ։ Կատարված ջարդի առիթով Սվազից այստեղ է գալիս կառավարության ներկայացուցչից, անգլիական ու ռուսական հյուպատոսներից և հայոց հոգևոր առաջնորդից կազմված քննիչ հանձնաժողովը։ Հայերի հետ ձերբակալվում են նաև թուրքեր։ Հանձնաժողովի նյութերի հիման վրա թուրքական դատարանը, առաջին անգամ ջարդերի ընթացքում, պատժում է մի քանի թուրքի և աքսորում Տրիպոլի։ Սա ազդում է թուրք ու քուրդ հրոսակների վրա և նրանց ստիպում հետ կանգնել հետագա ջարդերից։ Շատ զոհեր են տալիս և մյութական կորուստներ կրում Թոքատի շրջանի հայաբնակ գյուղերը։ Կեսարիայում 1895 թ. նոյեմբերի 18-ին սկսվում է հայերի կոտորածը։ Տեսնելով, որ հայերը նախապատրաստվել են ինքնապաշտպանության, ջարդարարները հրաժարվում են ապխտադործների և Պաղջչե պաշրի թաղերի վրա հարձակվելուց։ Հրոսակներին համառորեն էին դիմադրում «Փամպուկ» արհեստանոցի 60 հայ կոշկակարները։ Սակայն հրոսակները, ստանալով կանոնավոր բանակի զինվորների օգնությունը, ընկճում են հայերի դիմադրությունը և բոլորին սրի քաշում։

Ջարդերը ծավալվում են նաև Կիլիկիայի հայաբնակ վայրերում։ 1895 թ. նոյեմբերի 4-ին թուրքերը սկսում են Այնթապի հայերի ջարդը։ Գազա-Ալթրի 50—60 հայ ոսկերիչների խանութներն ու արհեստանոցներն ամբողջովին կողոպտվում են, սրի են քաշվում գրանցում գտած հայերը։ Կողոպուտն ու ավերումը քաղաքի հայաբնակ թաղերում կրկնվում է հաջորդ օրը։ Զոհվում է 300 մարդ, կողոպտվում են խանութներ, կրպակներ, արհեստանոցներ, թալանվում է 500 բնակարան, հրդեհվում է 9 տուն[35]։

Թուրքական իշխանությունները ջարդեր են կազմակերպում նաև Մարաշում։ Ամեն տեսակի զենքով զինված ջարդարարները հարձակվում են հայերին պատկանող բնակարանների վրա, ավերում ու թալանում են ամբողջ գույքը, անխնա կոտորում բնակիչներին։ Առաջին հարձակման ժամանակ կոտորվում են 150 հայ։ Մեծ ջարդը տեղի է ունենում նոյեմբերի 18-ին, առաջինից երկու շաբաթ հետո։ Զինվորներն ու ոստիկանությունը, թուրք խուժանի հետ, ամբողջ օրը թալանում են հայերի ունեցվածքը, կոտորում 970 հայ։ Ջարդը դադար է առնում միայն հաջորդ օրը։ Դրանից հետո տկրսվում են ձերբակալությունները. բանտ է նետվում մոտ 200 մարդ, որոնք հարցաքննության ժամանակ ենթարկվում են ծանր խոշտանգումների։ Ուրֆայում (որի 65000 բնակիչներից 20000-ը հայեր էին) հայերը ջարդի են ենթարկվում երկու անգամ՝ հոկտեմբերի 28—29-ին և դեկտեմբերի 28—29-ին։ Թուրք հրոսակներն ու ոստիկանությունը կողոպտում են հայերին պատկա-

---

34 Նույն տեղում, թ. 131։

35 АВПР, ф. «Канцелярия», д. 3433, л. 7—14, 22 ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 5, գ. 72, թ. 22—23։

նող խանութները և 190 բնակարան։ Արգելվում է պարենի մուտքը քաղաքի հայաբնակ թաղ, կտրվում է կապն արտաքին աշխարհի հետ։ Այդ վիճակը շարունակվում է երկու ամիս։ Երկրորդ կոտորածի ընթացքում զոհերի թիվը հասնում է 8000-ի, նյութական կորուստը՝ 200000 թուրքական ոսկու, մահմեդական է դառնում մոտ 500 հայ, 12 հայ իբրև «հանցագործ» աքսորվում է Տրիպոլի[36]։ Ջարդեր են կազմակերպվում նաև Կիլիկիայի հայաբնակ այլ վայրերում։

1890-ական թվականների ջարդերի ժամանակ արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերի շարքում իր հատուկ տեղն ունի Դյորթ-Յոլի (Չոռ-Մարզվան) հայերի հերոսական կռիվը կանոնավոր բանակի զորաջոկատների, ոստիկանության և թուրք ու չերքեզ հրոսակների դեմ։ Թուրքական իշխանությունների դրդմամբ 1895 թ. հոկտեմբերին չերքեզ ու թուրք մարդասպանները հարձակվել էին Օճազլու և Յոզերլու գյուղերի վրա, հրդեհել հայերի ունեցվածքը, ոչնչացրել շատերին։ Տեսնելով, որ դիմադրությունն անօգուտ է, հայերը նահանջում են դեպի Չոռ-Մարզվան։ Հրոսակները թալանում են գյուղացիների ունեցվածքը և ավերում տները։ Դրանք խրախուսվում էին թուրքական կանոնավոր բանակի ավելի քան 5000-անոց ջոկատի կողմից[37], 1895 թ. հոկտեմբերի 31-ին թշնամին խուռն բազմությամբ (2000 մարդ) հյուսիսային կողմից գրոհում է Չոռ-Մարզվանի վրա։ Կռվում թուրքական ուժերը պարտություն են կրում և նահանջում։ Հաջորդ հարձակումը թուրք հրոսակների խառնիճաղանջ ամբոխը կատարում է քաղաքի արևմտյան կողմից։ Այս անգամ ևս պարտվում է ու նահանջում։ Հաղթական այս կռիվներում, ինչպես մատնանշված է «Հնչակի» 1895 թ. դեկտեմբերի 1-ի համարում, հերոսի անուն են վաստակում Մկրտիչ և Արիստակես Պալյանները, Համբարձում Ռուբինյանը, Խաչատուր Գուլումջյանը և ուրիշներ։

Նոյեմբերի սկզբներին 1700 թուրք ու չերքեզ հրոսակներ նոր հարձակում են ձեռնարկում Չոռ-Մարզվանի վրա։ Կռիվները տևում են երեք օր[38]։ Հաղթանակը դարձյալ տոնում են հայերը։ Դրանից հետո Անտիոքի կուսակալը Չոռ-Մարզվանի վրա է շարժում 400 զինվորից բաղկացած մի նոր ջոկատ՝ Ալի բեյի գլխավորությամբ, որը, միանալով տեղում եղած 1000 զինվորի հետ, նախապատրաստվում է գրոհել հայերի վրա։ 1895 թ. նոյեմբերի 6-ին թուրք բեյը վերջնագիր է ներկայացնում հայերին, որի մեջ գրված էր. «Վաղը, ժամը 3-ին (ցերեկվա—Կ. Թ.), եթե չհանձնեք ձեր բոլոր զենքերը, թնդանոթները լարված ու պատրաստ սպասի բոլորովին ոչնչացնեմ ձեզ և ձեր բնակարանները»[39]։ Քաղաքի բնակչության մի փոքր մասը, վախի ազդեցության տակ, համաձայնում է դրան։ Մնացածները ջոկատներ կազմած շարունակում են կռիվը։ Նրանք դուրս են գալիս քաղաքից և բարձրանում լեռները, քաղաքը թողնելով թշնամուն[40]։

1895—1897 թթ. հայկական ջարդերը, որոնք սկսվել էին Տրապիզոնից՝ տարածվում են Գյումուշխանե, Բաբերդ, Երզնկա, Դերջան, Կարին, Բասեն, Կամախ, Քղի, Բայազետ, Արճեշ, Աղջավաղ, Վան, Շատախ, Կարճկան, Խիզան, Բիթլիս, Մուշ, Սասուն, Աղերդ, Սամսուն, Ամասիա, Մարզվան, Եվդոկիա, Սեբաստիա, Նիկոպոլիս, Զիլե, Կեսարիա, Խարբերդ, Բալու, Ակն, Արաբկիր, Հաճն, Մարաշ, Մելիտինե, Ադանա, Տարսոն, Մերսին, Դյորթ-յոլ, Արնթափ, Իսկենդերուն և Անտիոք բնակավայրերում։ Այդ ջարդերը թուրքական պետության կազմակերպած և թուրք ու քուրդ հրոսակների և կանոնավոր բանակի զինվորների միջոցով իրականացված առաջին զանգվածային ցեղասպանության փորձն էր։ Այդ ընթացքում, ինչպես հաղորդում են եվրո-

36 АВПР, ф. «Канцелярия», д. 3433, л. 7—24, 22 ԳԿԳԱ, ֆ. 56, գ. 72, թ. 22։

37 Հնչակ, 1. II, 1. 12. 1895։

38 Նույն տեղում։

39 Նույն տեղում, 31. I. 1896։

40 Նույն տեղում։

պական պետությունների դեսպանների և հյուպատոսների՝ պահպանված զեկուցագրերը, ժամանակի հայ և օտարերկրյա մամուլը, զոհվում է ավելի քան 300000 հայ, խանգարվում է արևմտահայերի բնական աճի ընթացքը։ Կովկաս, Ռուսաստան, Պարսկաստան, Բալկանյան երկրներ, Ֆրանսիա, Անգլիա, Ամերիկայի զանազան երկրներ, Եգիպտոս և այլուր գաղթում են ավելի քան 290000 արևմտահայեր, որոնք նոր գաղթօջախներ են հիմնում Եգիպտոսում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ամերիկայի մի շարք երկրներում և այլուր։ Ջարդի տարիներին ամբողջովին կամ կիսով չափ կողոպտվում ու ավերվում է 8000 հայաբնակ գյուղ, տակնուվրա է արվում 50000 տուն, առևանգվում են տասնյակ հազարավոր կանայք ու աղջիկներ, որբանում են ավելի քան 100000 երեխաներ, կրոնափոխ են լինում շատերը, մոտ 100000 մարդ դառնում է հաշմանդամ, հազարավոր ընտանիքներ մնում են առանց գոյության միջոցների[41]։ Ջարդերի հետևանքով խափանվում է հայկական ձեռներեցությունը. համարյա ամբողջ առևտուրը, գլխավորապես Անատոլիայում, անցնում է Թուրքերի ձեռքը։ Թուրքական գավառային բուրժուազիան հիմնականում ձևավորվում է 1895—1897 թթ. հայկական ջարդերից հետո՝ հայերից թալանած հարստությունների բազայի վրա։ Ավելի է սաստկանում հայ բնակչության ազգային ու սոցիալական ճնշումը։ Ջարդերը, հալածանքները ու հարստահարումները ծանր հարված են հասցնում Արևմտյան Հայաստանի արտադրողական ուժերին, քայքայում են նրա էկոնոմիկան, երկրում ստեղծում տնտեսական ու քաղաքական ծանր ու անտանելի վիճակ։

ИЗ ИСТОРИИ ПОГРОМОВ И САМООБОРОНИТЕЛЬНЫХ БОЕВ ЗАПАДНЫХ АРМЯН В 1890-х ГОДАХ

К. З. ТАРОЯН

Резюме

С начала 1890 гг. султанское правительство Турции провозгласило массовые погромы армян государственной политикой и в соответствии с идеологией панисламизма приступило к ее осуществлению. Расстрел мирной демонстрации армян в Константинополе в сентябре 1895 г. и резня тысяч невинных людей с помощью регулярной армии, к чему почти равнодушно отнеслись европейские государства, были восприняты как единственное и легкое средство уничтожения армян. Массовая резня армян была организована в Трапезунде (Трабзон) и затем распространилась на Западную Армению и местности Османской империи с армянским населением. Это было первой попыткой массового геноцида армян, организованного турецким государством и осуществленного при помощи турецких и курдских погромщиков и солдат регулярной армии, жертвой которого стали более 300 тысяч армян. В результате был нарушен процесс естественного роста западных армян, в другие страны вынуждены были переселиться 290 тысяч спасшихся армян. За годы погромов полностью и частично было разграблено и разрушено 8 тысяч армянских сел, 50 тысяч домов, угнаны десятки тысяч женщин и девушек, осиротели более 100 тысяч детей, около 100 тысяч стали калеками, тысячи семей остались без средств к существованию. Погромы, притеснения и угнетение нанесли тяжелый удар по производительным силам Западной Армении, подорвали ее экономику, создали в стране тяжкое и невыносимое экономическое и политическое положение.

41 Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 5031։